ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«----» փետրվարի 2013թ.** **N----Ն**

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 580-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերին համապատասխան՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2013 թվականի ծրագրի վերաբերյալ» N580-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) հավելվածի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «14. Երևան քաղաքի սեփականությունը համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման նախորդ ծրագրերի շրջանակներում գնահատված անշարժ Գույքի գնահատման ժամկետը մեկ տարին գերազանցելու դեպքում անշարժ Գույքն ենթակա է կրկին գնահատման՝ Ծրագրի 13-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով»:

2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ

3) VI գլխով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

**Հավելված**
**Երևան քաղաքի ավագանու**
**2013 թվականի փետրվարի 12-ի**
**Ն. ----- -Ն որոշման**

## VI. 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐ

## ՑԱՆԿ

| Հ/Հ | Վարչական շրջան | Ծածկագիր | Նպատակային նշանակություն | Գործառնական նշանակություն | Հասցե | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արաբկիր | 01-003-210-016 | Բնակավայրերի | Ավտոտնակի զբաղեցրած տարածք | Արղության փողոցին հարող հարածք | |
| 2 | Քանաքեռ-Զեյթուն | 01-012-318-063 | Բնակավայրերի | հասարակական | Հր.Ներսիսյան փողոցին հարող տարածք | |
| 3 | Շենգավիթ | 01-011-336-103 | Բնակավայրերի | Հասարակական | Ն.Շենգավիթ 6-րդ փողոց | |
| 4 | Կենտրոն | 01-003-135-122 | Բնակավայրերի | Բնակելի տուն | Պռոշյան փողոցին հարող տարածք | |
| 5 | Կենտրոն | 01-003-135-121 | Բնակավայրերի | Բնակելի տուն | Պռոշյան փողոցին հարող տարածք | |
| 6 | Կենտրոն | 01-003-135-124 | Բնակավայրերի | Բնակելի տուն | Պռոշյան փողոցին հարող տարածք | |
| 7 | Կենտրոն | 01-003-135-125 | Բնակավայրերի | Բնակելի տուն | Պռոշյան փողոցին հարող տարածք | |
| 8 | Էրեբունի | 01-011-519-001 | Բնակավայրերի | հասարակական | Արին Բերդի փողոցին հարող տարածք | |
| 9 | Շենգավիթ | 01-011-054-024 | Բնակավայրերի | հասարակական | Արշակունյաց պողոտային հարող տարածք | |
| 10 | Դավիթաշեն | 01-004-001-026 | Բնակավայրերի | հասարակական | Փիրումյան փողոցին հարող տարածք | |
| 11 | Կենտրոն | 01-001-127-001 | Բնակավայրերի | հասարակական | Աբովյան փողոցին հարող տարածք | |
| 12 | Կենտրոն | 01-006-304-001 | Բնակավայրերի | հասարակական | Դեղատան փողոցին հարող տարածք | |
| 13 | Ավան | 01-002-052-057 | Բնակավայրերի | Բնակելի տուն | Ավան 7-րդ փողոցին հարող տարածք | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 14 | Ավան | 01-002-052-058 | Բնակավայրերի | Հասարակական | Ավան 7-րդ փողոցին հարող տարածք | |
| 15 | Աջափնյակ | 01-001-109-001-042 | Բնակավայրերի | բնակելի կառուցապ. | Չաուշի փողոցին հարող տարածք | |
| 16 | Ավան | 01-002-052-057 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Ավանի 4-րդ փողոցին հարող տարածք | |
| 17 | Ավան | 01-002-052-058 | Բնակավայրերի | տնամերձ | Ավան 7փող 16տան հողամաս | |
| 18 | Արաբկիր | 01-003-210-016 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Հ. Արղության փողոցին հարող տարածք | |
| 19 | Արաբկիր | 01-003-135-121 | Բնակավայրերի | տնամերձ | Պռոշյան 42 | |
| 20 | Արաբկիր | 01-003-135-124 | Բնակավայրերի | տնամերձ | Պռոշյան 42 | |
| 21 | Արաբկիր | 01-003-135-122 | Բնակավայրերի | տնամերձ | Պռոշյան 42 | |
| 22 | Արաբկիր | 01-003-135-125 | Բնակավայրերի | տնամերձ | Պռոշյան 42 | |
| 23 | Արաբկիր | 01-003-020-096 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Ա.Խաչատրյան փող. 9/1 | |
| 24 | Դավթաշեն | 01-004-001-026 | Բնակավայրերի | տնամերձ | Դավթ. 1թաղ. 21/5 | |
| 25 | Դավթաշեն | 01-004-110-180 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Սասնա Ծռերի փողոցին հարող տարածք | |
| 26 | Դավթաշեն | 01-004-009-374 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Տ.Պետրոսյան 64շ.-ին հարող տարածք | |
| 27 | Էրեբունի | 01-005-343-140 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Էրեբունի փողոցին հարող տարածք | |
| 28 | Էրեբունի | 01-005-343-127 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Էրեբունի փողոցին հարող տարածք | |
| 29 | Էրեբունի | 01-005-343-144 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Էրեբունի փողոցին հարող տարածք | |
| 30 | Էրեբունի | 01-005-396-015 | Բնակավայրերի | տնամերձ | Դիմիտրով փողոցին հարող տարածք | |
| 31 | Էրեբունի | 01-005-530-065 | էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվ. օբյեկտների | տրանսպորտի | Արցախի պողոտաին հարող տարածք | |
| 32 | Կենտրոն | 01-006-304-001 | Բնակավայրերի | ընդհ. օգտագործ. | Մովսես Խորենացու փողոցին հարող տարածք | |
| 33 | Կենտրոն | 01-006-222-110 | Բնակավայրերի | ընդհ. օգտագործ. | Արհեստավորների փողոցին հարող տարածք | |
| 34 | Կենտրոն | 01-006-020-038 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Գ. Քոչարի փողոցին հարող տարածք | |
| 35 | Կենտրոն | 01-006-020-016 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Իսահակյան փող. 28 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 36 | Մալաթիա-Սեբաստիա | 01-007-420-012 | Բնակավայրերի | ընդհ. օգտագործ. | Սեբաստիայի փողոցին հարող տարածք | |
| 37 | Մալաթիա-Սեբաստիա | 01-007-404-001-915 | էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվ. օբյեկտների | կոմուն. ենթակառ. | Անդրանիկի 120շ/դ | |
| 38 | Նորք-Մարաշ | 01-008-101-073 | Բնակավայրերի | ընդհ. օգտագործ. | Գյուրջյան փողոցին հարող տարածք | |
| 39 | Նոր Նորք | 01-009-084-098 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Ամառանոցային 119 | |
| 40 | Շենգավիթ | 01-011-519-001 | Բնակավայրերի | ընդհ. օգտագործ. | Արին-Բերդի փողին հարող տարածք | |
| 41 | Շենգավիթ | 01-011-336-103 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | 6-րդ փողոցին հարող տարածք | |
| 42 | Շենգավիթ | 01-011-054-024 | Բնակավայրերի | ընդհ. օգտագործ. | Արշակունյաց պողոտային հարող տարածք | |
| 43 | Քանաքեռ-Զեյթուն | 01-012-234-002 | Բնակավայրերի | տնամերձ | Գոգոլի փող. 75 տուն | |
| 44 | Քանաքեռ-Զեյթուն | 01-012-233-118 | Բնակավայրերի | տնամերձ | Գոգոլի փող. 88 տուն | |
| 45 | Քանաքեռ-Զեյթուն | 01-012-318-063-001 | էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվ. օբյեկտների | էներգետիկայի | Հ. Ներսիսյանի փակուղուն հարող տարածք | |
| 46 | Քանաքեռ-Զեյթուն | 01-012-318-170 | Բնակավայրերի | հասարակ. կառուցապ. | Հ. Ներսիսյանի փակուղուն հարող տարածք | |
| 47 | Կենտրոն | 01-006-526-001 | Բնակավայրերի | ընդհ. օգտագործ. | Գլխավոր պողոտային հարող տարածք | նվիրաբերություն ՀՀ կառավարության 27.12.2012թ հ.1669-Ա որոշում |

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 580-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը

օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի (ներառյալ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցությամբ) վերաբերյալ, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները և օտարման եղանակները:

Սույն նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ հ.580-Ն որոշման հավելվածը լրացնել նոր VI-րդ գլխով՝ օտարման առաջարկվող հողամասերի ցանկով: Հարկ է նշել, որ առաջարկվող հողամասերի ցանկում ներառվել է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հողամաս նվիրաբերելու մասին» N1669-Ա որոշման հիման վրա Համազգային թատրոնի շենք կառուցելու նպատակով Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու համար առանձնացված հողամասը:

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N580-Ն որոշման 14-րդ կետի փոփոխությունը պայմանավորված է նշված կետի դրույթների հստակեցման անհրաժեշտությամբ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

### «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 580-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N580-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

### «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N580-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N580-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ